ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

« 08 » հուլիս 2019 թվական N 79

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱՔԱՎԱՃՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՅԿ ՍԱՐԳՍԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին կողմից 2019 թվականի հունիսի 4-ից 5-ը ներառյալ ըստ անհրաժեշտության ստուգում է իրականացվել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաքավաձոր համայնքում: Ստուգման արդյունքում պարզվել է, որ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաքավաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական հողեր նպատակային նշանակության հողամասերում (կադաստրային ծածկագրեր՝ 02-060-0105-0006, 02-060-0102-0013, 02-060-0102-0012, 02-060-0706-0001, 02-060-0102-0001, 02-060-0105-0004, 02-060-0105-0001 և այլն) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից 2016 թվականի սեպտեմբերի 2-ին տրված օգտակար հանածոյի արդյունահանման ՈՇԱԹ-29/545 թույլտվության համաձայն «ՏԱԳԱՌ» ՍՊԸ-ի կողմից կատարվել է քարի արդյունահանում՝ առանց հողամասերի նպատակային նշանակության փոփոխության, որի համար 2019 թվականի հունիսի 12-ին կազմվել է հողերի օգտագործման և պահպանման խախտումների N10 ակտը:

Խախտվել է «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով, 5-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 2019 թվականի հունիսի 18-ի N06-13-10 որոշումը և ղեկավարվելով «Վարչական

իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ և 244[9]-րդ հոդվածներով, «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 16-րդ մասով սահմանված պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաքավաձոր համայնքի ղեկավար Հայկ Սարգսի Բաղդասարյանի (ծնված՝ 01.01.1969թ., Հայաստանի Հանրապետության նույնականացման քարտ (ID)՝ 008509341, տրված 21.10.2016թ., 001-ի կողմից) նկատմամբ կիրառել վարչական տույժ 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով, որը ենթակա է վճարման սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում՝ պետական բյուջեի 900005001517 հաշվեհամարին (Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի հաշվեհամարին):

2. Պարտավորեցնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաքավաձոր համայնքի ղեկավար Հայկ Սարգսի Բաղդասարյանին ողջամիտ ժամկետում վերացնել հայտնաբերված խախտումները:

3. Սույն որոշումը երեք օրվա ընթացքում հանձնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաքավաձոր համայնքի ղեկավար Հայկ Սարգսի Բաղդասարյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաքավաձոր համայնքի ղեկավար Հայկ Սարգսի Բաղդասարյանին հանձնելու պահից, որը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ 15 օրվա ընթացքում:

5. Սույն որոշման կատարման նկատմաբ հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետին՝ Արայիկ Ռոմիկի Հակոբյանին:

Недействительная подпись

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ